Ֆրանսիայի պատմաբանի այս զեկուցումը, որ կարդացուել է Փարիզի առաջնակարգ հասարակութեան առաջ, մի սրտաճմլիկ տեսարան է բաց անում ընթերցողի առաջ. նա նկարագրում է տաճկահայերի քաղաքական ծանր վիճակը, նոցա իրաւազուրկ կացութիւնը, 95—96 թ. կոտորածները, եւրոպական տէրութիւնների խոստումները, որոնք նոյն իսկ Բեռլինի 61 յօդ. մոռանալով թոյլ են տուել, որ տաճիկ կառավարութիւնը տաճկահայերի նկատմամբ ձեռք առած ճնշումները պարբերաբար շարունակի։ Իւր զեկուցման վերջում նա կոչ է անում ունկընդիրներին քարոզել ամենայն տեղ Հայաստանի վաստակեալների և բեռնաւորների բաղդի ծանրութիւնը թեթեւացնելու համար, որովհետև ֆրանսիական կառավարութիւնը և ժողովուրդը արևելեան քրիստոնեաների պաշտպան են համարւում։

Լ. Վ.

Ազգագրական Հանդէս: Եռամսեայ, խմբագրութեամբ Ե. Լալայեանի և հրատ. Հայոց Ազգագրական Ընկերութեան։ Լոյս տեսաւ Հանդիսի 1907 թ. XVI. գիրքը, որ կազմած է հետաքրքրական բովանդակութեամբ։ Զետեղուած նիւթերի մէջ ի միջի այլոց արժանի են ուշադրութեան. 1) Նոր-Բայազէտի գաւառ. ազգագրութիւն Ե. Լալայեանի. 2) Հայ ժողովրդական վէպը. Մ. Աբեղեանի. 3) Հայ ժառանգական իրաւունքը Թ. Սամուէլեանի. 4) Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները—Մեսրովբ վարդ. Տէր Մովսիսեանի. 5) Կաթողիկոսական յուշարկաւորութիւն և թաղումն. Գարեգին վարդ. Յովսէփեանի և այլն։ Զետեղուած են նաև յաջող պատկերներ ու մի քանի մակարդակներ։ Ամբողջ հատորը պարունակում է մօտ 240 երես։

Բ. Իշխանեան. — Թիւրքիայի ապագան, Թիֆլիզ, 1907, գինն է 10 կոպէկ։ Ներկայ քննական էտիւտի մէջ հեղինակը փորձում է գիտական եղանակով որոշել